եանի սուտերը և շահատակութիւնները» խորագիրով : — Մեծանուն Բրօֆէսէօր Լօզան՝ Ժօռժ Գուխտէյի տպարանէն 1879 ին հրատարակած է **Ազարանգեղոսի** Ֆրանսերէնը : — Իր ընդարձակ և արկածալից կենսագրականը տե՛ս «Ամենուն տարեցոյցը» 1911 :

**ՄԱՆՉԷՍԹԸՐ**ի հայ գաղութն ալ զանազան ժամանակներու մէջ բոլորած է տպարանական ցանցառ շրջաններ :

245բ. **Կարապետ Վրդ. Շահնազարեանց** . — Այս քաղաքին մէջ իր կարճատեւ գործունէութիւնը [1864] տե՛ս **245Ա** թուահամար (Փրանսայի բաժին) :

280. **Թորոս Քհնյ. Տուղլաճեցի** որդին է Կալկաթացի Տ. Խաչիկ քահանայի, ուսափ և Խաչիկեան ալ կոչուած : Կալկաթա յաճախած է անգլ. դպրոցը : Լօնտօն անցնելով, աժ.արանութիւն ուսած է : Ապա Պօլիս գալով հրատարակած է **Հայ Եկեղեցի** կրօնաթերթը : Կրօնուսոյցի պաշտօնով ուղեւորած է Երուսաղէմ, Պարսկաստան, Էջմիածին ու Մանչէսթր որուն հայ գաղութին ծախքով Էջմիածին գացած է՝ քահանայ ձեռնադրուելու 1889 ին՝ Տ. Թէոդորոս անուամբ : Քառասունքը ճամբան ընելով Ջուղայեցի կը վերադառնայ Մանչէսթր, և 1896 Յունիսին կ'սկսի գործի՝ իբր առաջնորդ : Հոն կը մնայ մինչեւ 1902 Յուլիս, դժգոհ ձգելով իր հօտը : Յետոյ մեկնած է Ամերիկա՝ ուր կը մնայ ցարդ : — Մանչէսթրի մէջ իր հոգեւոր հովուութեան առեն Տ. Թորոս հայկ. մատուռին մէջ տպարան մը բացաւ ուր հրատարակեց վերոյիշեալ կրօնաթերթէն զատ՝ **Թուղթ հովուական** (1899) :

281. **Նշան Ճիհանեան** . — Ծն. Հաւքեօյ : Պահ մը գրաշարութեամբ զբաղելէ վերջ՝ 1896 ի ջարդ. հոսանքին՝ անցած է Յունաստան ուր Ե. Օտեանի **Միութիւն** թերթը



Ն. ՃԻՀԱՆԵԱՆ

շարած է քիչ մը ատեն : Յետոյ մեկնած է Մարսիլիա, Բարիզ, Լօնտօն, ու Մանչէսթր՝ իբր գրագիր Մուրատեանի : — 1898 ին **Վաղուան ձայնի** հրատարակութեան առթիւ Ս. Պարթեւեան կը բանակցի Նշանի հետ որ գիշերները գրաշարութիւն ընէ իր թերթին : Անգլիացիի մը տան վերնայարկն էր՝ առանց մեքենայի իրենց աշխատանոցը . տառերը բերել տուած էին Տ. Տօղրամաճեանէն (Բարիզ), ու նոյն թերթը կը դրոշմուէր անգլ. տպարան մը : 1899 ին Բաշալեան և Արփիար Լօնտօնէն կը հրաւիրեն Ճիհանեանը՝ Վերակազմեալ Հնչակեան կուսակցութեան **Նոր Կեանք** և **Մարտ** թերթերուն գրաշարապետութեան համար : Երկու մեծանուն հրապարակագիրք իրմէ առաջ գրաշար ունէին հոն Գրիգոր Համամճեանը որ վերջէն Եգիպտոս անցած է : Ճիհանեան 4 - 5 տարի վարած է այդ գործը : Հին ու նոր Հնչակեանց միանալովն էր որ եկաւ կրկին **Հնչակ** թերթը՝ զոր կը շարէին Ճիհանեան և Յովակիմ : Ասոնցմէ առաջինը հուսկ ուրեմն լքած է փր աշխատութիւնը՝ կուսակցական պառակտումներու հետեւանօք, և Սահմանադրութեան հռչակումին՝ վերադարձած է Պօլիս, նախ Տէր-Ներսէսեան, վերջն ալ Յ. Մատթէոսեան տպարաններուն մէջ պաշտօն վարելով :

**ՊՕՐՏԱՆԱՆԹԱ**ի Սկովտ. այս քաղաքին մէջ տառսպի մը հետքը թողած է

282. **Փիլիպ. եւ. Տիրանեան** տպարանը, 1904 ին լոյս ընծայելով Մ. Մինասեանի երկհատոր **Բնաշրջականի մը Ներշնչումները** երկը :

**ՄԱԼԹԱ** կղզին աւելի 84 տարի առաջ Մեսրոպ. տառերով գիրքեր լոյս ընծայած է

190ա. «**Մարդասիրական Ընկերութեան Ամերիկացւոց**», տպարանը, բոլորն ալ տաճկերէն և կրօնաշունչ . — Այլանց վէ կեօյէ եօլ Գրիստոս տուր, Բասպանի տուանըն խըզըրընէ պիր վազ (1828), Թալիմ զայըզճը, Տասլարտա օյան քէօյ, Իմանըն